

**ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻ ԴՐԱԿԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ
ՕՍՄԱՆԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ (1840ականներին Սկսեալ)**

ՃԱՆ ԷՐԶՈՐՈՐՈՒՄԼՈՒՕՂԼՈՒ
canerzurumluoglu@hotmail.com

ՄՈՒՏՔ

Յետթանգիմաթեան շրջանին արեւմուտքի հետ շփման մէջ եղող հայ մտաւորականութիւնը փիլիսոփայութեան բնագաւառ ալ ներդրումներ ունեցած է: Եղիա Տէմիրճիպաշեան (1851-1908), որ ամենէն ուշագրաւ դէմքերէն մէկն է այս ծիրէն ներս, յատկապէս 1870ականներէն սկսեալ հետաքրքրուած է դրական փիլիսոփայութեամբ եւ հրատարակած է թերթ մը իր փիլիսոփայական միտքը քարոզելու համար: Գրած է նաեւ բարեշրջական (evolutionist) եւ նիւթապաշտ (materialist) փիլիսոփայութեան մասին: Ինչպէս օսմանեան յառաջդիմական մտաւորականները, ինք եւս նպատակադրած է լուսաւորել ժողովուրդը արեւմտեան գաղափարներու միջոցով:

Մինչ թրքերէն աղբիւրներ ընդհանրապէս նկատի չեն առներ Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու, յոյներու եւ այլ ժողովուրդներու՝ իրենց ազգային լեզուով կատարած աշխատանքները, այս փոքր ուսումնասիրութեամբ փորձ կ'ըլլայ հայ մտաւորականի մը՝ Եղիա Տէմիրճիպաշեանի փիլիսոփայական բնոյթի աշխատասիրութիւնները ներկայացնել, անոր փիլիսոփայական գործունէութեան մասին տեղեկութիւններ փոխանցել եւ ընդգծել յատկապէս անոր դերը՝ Օսմանեան Կայսրութեան մէջ դրական փիլիսոփայութեան տարածման մէջ:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ ԴԷՊԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒ ԾԱՆՕԹԱՅՈՒՄ

Օսմանեան Կայսրութեան մէջ արեւմտեան փիլիսոփայական հոսանքներու թափանցումը եւ տարածումը կը զուգադիպի յետ-բարեփոխումներու (1840ականներ) շրջանին, երբ թուրք մտաւորականութիւնը ծանօթացաւ արեւմտեան փիլիսոփայութեան, յատկապէս երբ սկսաւ սորվիլ արեւմտեան լեզուներ, հետաքրքրուիլ արեւմտեան քաղաքակրթութեամբ:

Այս հետաքրքրութեան տուն տուող պատճառը այն համոզումն էր, որ կայսրութեան հասարակական եւ ռազմական խնդիրներու լուծումը կարելի էր որոնել Եւրոպայի փիլիսոփայական մտածելակերպին ընդմէջէն:

Թրքական փիլիսոփայութեան նշանաւոր պատմաբան Հիւմի Զիա Իւլքենի (1901-1974) համաձայն «Մինչեւ այդ ժամանակ (կ'ակնարկէ Ահմետ Միտհաթի ուսումնասիրութիւններուն, այսինքն՝ 1870ականներուն - Ճ.Է.) թանգիմաթեան մտաւորականները եւ Նոր Օսմանցիները հեղաքրքրող միայն քաղաքական միտքն էր: Արեւմտեան մտաւորական կեանքով կը

հեղաքրքրուէին այնքան, որքան ապիկա տոյն նիւթին կ'առնէր: Արդէն Ղազալին եւ Իպն Սինան բաւարար համարող այս սերունդը, եւրոպայի մէջ ուրիշ բան պիտի չփնտրէր եթէ ոչ՝ թեքնիքը եւ քաղաքական յեղափոխութեան ծառայելիք գաղափարները»¹:

Այս դիտատրութեամբ, օսմանեան թուրք մտաւորականութեան առաջին ուսումնասիրութիւնները կեդրոնացան քաղաքական, իրաւաբանական փիլիսոփայութեան եւ ֆրանսացի լուսաւորականներու վրայ: Իմմանուէլ Քանթի, Կոթֆրիտ Վիլհելմ Լայպնիցի, Գեորգ Վիլհելմ Ֆրիտրիխ Հեկելի նման փիլիսոփաներու աշխատասիրութիւնները սահմանադրութեան վերականգնումէն (1908) ետք միայն թուրք մտաւորականութեան ուշադրութիւնը պիտի գրաւէին, երբ յետ-բարեփոխումներու շրջանին տիրապետող ամանդական մտայնութիւնը սկսաւ նահանջել եւ եւրոպամէտ լուսաւորական գաղափարները հետաքրքրութեան առարկայ դարձան: Այս շրջանի փիլիսոփայական աշխատասիրութիւններուն մէջ կ'ընդգծուի գիտական մտքի կարեւորութիւնը, ճիգ կը տարուի «դրապաշտ» (positivist) եւ նիւթապաշտ (materialist) գաղափարները համաձայնեցնելու իսլամական միտքին հետ: Եւրոպական տիպի գիտական հաստատութիւններ ալ այս ժամանակաշրջանին հանդէս կու գան²: Յատկապէս եւրոպական ուսում ստացած բժշկական եւ զինուորական համալսարանի շրջանաւարտները ազդու ներգործութիւն կ'ունենան եւրոպական մտքի տարածման:

Այս շրջանին թրքերէն փիլիսոփայական փոքրաթիւ գիրքեր լոյս տեսած են: Մինիֆ փաշան (1830-1910)³, որ փիլիսոփայական զարթոնքի մը իրականացման համար առաջին քայլերը կ'առնէր⁴, հրատարակած է *Telhis-i Hikmet-i Hukuk* (1884) (Համաոսոտութիւն իրաւաբանական փիլիսոփայութեան) եւ *Hikmet-i Hukuk* (1885) (Իրաւաբանական փիլիսոփայութիւն) երկերը, որոնք ժամանակակից իրաւաբանական փիլիսոփայութիւնը ծանօթացուցած են հասարակութեան: Ան գրած է նաեւ *Muhaverat-i Hikemiye* (1859) (Փիլիսոփայական երկխօսութիւններ) երկը, որ երկխօսութեան ձեւով գրուած ուշագրաւ գործ մըն է: Գիրքը կ'ընդգրկէ Վոլթերի, Ֆենըլոնի եւ Ֆոնթենէլի կողմէ գրուած երկխօսութիւնները: Մինիֆ փաշա հրատարակած է նաեւ յօդուածաշարք մը՝ «Tarih-i Hükm-i Yünan» (Յոյն փիլիսոփաներու պատմութիւն) խորագրով, *Mecmûa-i Fünûn* (Գիտութիւններու թերթ) թերթին մէջ: Այս յօդուածաշարքը արեւմտեան աղբիւրներէ քաղուած յունական փիլիսոփայութեան պատմութեան վերաբերող առաջին թրքերէն ուսումնասիրութիւնն է:⁵ Այս շրջանին Ահմէտ Վեֆիք փաշա (1823-1891)⁶ ատենի միակ համալսարանի Dârülfünûnի (Գիտութիւններու տուն) մէջ պատմութեան փիլիսոփայութիւն դասաւանդած է. իր դասերը 1863ին որպէս յօդուածաշարք հրատարակուելէ ետք վերածուած են գիրքի: Ահմէտ Միտհաթն (1844-1912)⁷ ալ նոյն շրջանի նշանաւոր մտաւորականներէն է, որուն շնորհիւ, ըստ Իպէնի, թուրք մտաւորական կեանքին մէջ առաջին անգամ եւրոպական փիլիսոփայական խնդիրները ուշադրու-

թեան առարկայ կը դառնան Թուրքիոյ մէջ⁶: 1872ին իր հիմնած *Dağarcık* (Մտապաշար) պարբերաթերթով զանազան փիլիսոփայական նիւթերու կողքին, Միտհաթ քարեշըքական դպրոցի մասին ալ տեղեկութիւններ տուած է: Գրած է *Schopenhauer* խորագրեալ գրքոյկ մը, ուր քննադատած է գերմանացի փիլիսոփան սխալ մեկնաբանութիւններով⁷: 1908ի սահմանադրութեան հռչակումէն ետք *Dârülfünûn*ի մէջ ան փիլիսոփայութեան պատմութիւն դասաւանդած է: Ալի Սուալիի (1839-1878)¹⁰ *Ulûm* (Գիտութիւններ) թերթին մէջ յոյն փիլիսոփաներու մասին տուած տեղեկութիւններն ալ օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան տեսանկիւնէն արժէք կը ներկայացնեն: Թարգմանած է նաեւ Սոկրատի աշակերտ Kiyotiyosի պատկանող երկխօսութիւն մը, որ հրատարակուած է 1867ին:

Օսմանեան Կայսրութեան մէջ վերացական փիլիսոփայութեան առաջին քայլերը կը տեսնենք 1885ականներուն¹¹, մինչ նախորդները գործնական նպատակներ կը հետապնդէին, ինչպէս քաղաքական փիլիսոփայութիւնը: Թրքերէն առաջին փիլիսոփայական հանդէսը՝ *Felsefe Mecmuası* (Փիլիսոփայութեան հանդէս) լոյս տեսած է 1912ին¹², իսկ երկրորդական վարժարաններու մէջ փիլիսոփայութեան առաջին դասաւանդութիւնը սկսած է 1914ին սեփական վարժարանի մը մէջ¹³:

ԵՂԻԱ ՏԵՄԻՐԾԻՊԱԾԵԱՆԻ ԱԿԱՆԴԸ՝ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՐՈՂՈՒԹԻՒՆ ԲԵՐԵԼՈՒ ՄԷՋ

Ի տարբերութիւն թրքական միջավայրին, Տէմիրճիպաշեան արդէն 1880ականներէն փիլիսոփայութիւն կը դասաւանդէր հայկական վարժարաններու մէջ, իսկ 1883-88՝ հրատարակած է *Գրական եւ Իմաստասիրական Շարժումը*, ուր կը քարոզէր իր դրական փիլիսոփայութիւնը: Այս հանդէսը գրական եւ իմաստասիրական նիւթերու կողքին կը բովանդակէր նաեւ գիտական, կրթական եւ այլ նիւթեր, որոնց միջոցով Տէմիրճիպաշեան կը ջանար ժողովուրդը լուսատրել:

Տէմիրճիպաշեանի համոզմամբ, արեւմտեան գաղափարներու ծաւալումը, բոլոր թերութիւններով հանդերձ, պիտի լուսատրէր հայութիւնը: Ընկերային յառաջդիմութիւնը միայն այս ճամփով պիտի կարելի ըլլար իրականացնել: Ան նախընտրեց վերոնշեալ գաղափարները արագօրէն փոխանցել ժողովուրդին փոխանակ զանոնք խորագնին վերլուծութեան ենթարկելու: Անկախ իր գիտական եւ փիլիսոփայական արժէքէն, ձգտեցաւ լայն զանգումներուն գիտական եւ փիլիսոփայական նիւթերու շուրջ տեղեկութիւններ տալ:

Տէմիրճիպաշեան եւ դրական փիլիսոփայութեան դպրոցի ծանօթացումը օսմանեան թուրքերուն եւ հայերուն

Դրական փիլիսոփայութիւնը սերտ կապեր ունէր բնական գիտութիւններու հետ եւ հայ մտաւորականներու մօտ ալ ընդունելութիւն գտած էր, քանի որ գիտութիւնը կը նշանակէր յառաջդիմութիւն: Ժժժ. դարու երկ-

րորդ կեսին, յատկապէս 1870-80ականներուն դրական փիլիսոփայութիւնը հայերու մէջ արձագանգ կը գտնէր: Պարբերաբերթերու մէջ գիտական բնոյթի յօդաւածներ եւ թարգմանութիւններ կը հրատարակուէին: Լոյս կը տեսնէին *Գիտական Շարժում*⁴ եւ *Մեզեօրա*⁵ գիտական հանդէսները: Հրապարակ իջած էին դրապաշտ դպրոցի հետեւորդ Տէմիրճիպաշեանի եւ Գալուստ Կոստանդեանի (1840-1898) նման մտաւորականները:¹⁶

Դրական փիլիսոփայութիւնը հայ մտաւորականութեան մէջ հանդէս կու գար գիտական մտքի ջատագովութեամբ եւ պահպանողական մտքի քննադատութեամբ: Կոստանդեանի կողմէ 1878ին Ձմիւռնիոյ մէջ հրատարակուած *Մէթոփի Վրայ* գիրքը, որ դրական փիլիսոփայութեան եւ գիտական մտքի ջատագովութիւն մըն էր, հակակրօնական բնոյթի պատճառով մեծ վրդովմունք յարաջացուց պահպանողական շրջանակներէ ներս եւ պատճառ դարձաւ բողոքի ալիքի, նոյնիսկ արձագանգ գտաւ Եւրոպայի մէջ: Նշանաւոր դրապաշտ Էմիլ Լիթրէն (Littre, 1801-1881) իր *La Philosophie Positive* հանդէսին մէջ «Auguste Comte à Smyrne»¹⁷ խորագրեալ յօդաւածով իր զօրակցութիւնը յայտնեց Կոստանդեանին¹⁸:

Դրական փիլիսոփայութիւնը Տէմիրճիպաշեանի վրայ խոր հետքեր թողած է: Տէմիրճիպաշեան 1874ին ծանօթացած էր այդ փիլիսոփայութեան դրոյթներուն, երբ մեկնած էր Ֆրանսա՝ համալսարանական ուսման եւ մինչեւ 1890ականները մնացած անոր անզիջող հետեւորդը:

Օսմանեան թուրքերու մէջ դրական փիլիսոփայութեան առաջին պաշտպանը եղած է Պեշիր Ֆուատ (1852-1887)¹⁹, որ ժամանակակիցն էր Տէմիրճիպաշեանին: Ան իր յօդաւածներով քննադատած է բնագանցական (metaphysical) միտքը եւ պաշտպանած այն տեսակէտը, թէ հասարակութիւնը միայն գիտութիւնով է որ կը լուսաւորուի: Ֆուատ ազդուած է ֆրանսական լուսաւորականներէն, Օկիաթ Քոնթի (1798-1857) եւ Լիթրէի նման դրապաշտ փիլիսոփաներէն եւ նիւթապաշտ Պիլաներէն²⁰: 1886ին գրած է նաեւ Վոլթերը ծանօթացնող կենսագրութիւն մը, որ մինչեւ այդ (տպուած 1887) գրուած ամէնէն մանրամասն կենսագրութիւնն է: Գիրքին մէջ տեղ տրամադրուած է նաեւ Եւրոպայի մէջ արձանագրուող գիտական զարգացումներուն, քննադատուած է հաւատաքննական ատեանը²¹:

Տէմիրճիպաշեան եւ բարեշրջական ու նիւթապաշտական փիլիսոփայութեան դպրոցի ծանօթացումը օսմանեան թուրքերուն եւ հայերուն

Տէմիրճիպաշեանի 1880ականներու յօդաւածներուն մէջ զգալի է բարեշրջական (evolutionist) եւ նիւթապաշտական փիլիսոփայական դպրոցներու ազդեցութիւնը: Ան բնագանցութեան եւ կրօնքին հասցէին խիստ քննադատութիւններ կ'ուղէ: Փիլիսոփայութիւնը, ըստ իրեն, պէտք է հաստատուի գիտութեան վրայ եւ դրժէ բնագանցութիւնը. «Դրականութիւն եւ իմաստասիրութիւն կը բարեշրջին գիտութեան ազդեցութեամբ»²²: Տէմիրճիպաշեանի համածայն, արդի փիլիսոփայութիւնը կը նախընտրէ մակա-

ծույթինը (induction) քան ընծայութիւնը (deduction): Ընծայութիւնը, առանց դիմելու դիտողութեան եւ փորձարկութեան, օրէնքներ հռչակել է, իսկ մականութիւնը «կենթադրէ դիտողութիւն եւ փորձարկութիւն» նախքան օրէնքներ յայտնելը²³: Տէմիրճիպաշեանի վերաբերումը, կրնանք մեկնաբանել որպէս քննադատութիւն բնազանցական մտքի:

Քարեշրջական տեսութիւնն ալ հետաքրքրութեան առարկայ դարձած է օսմանեան մտաւորականութեան մօտ, բայց ընդհանրապէս խուսափած են ակնարկել Տարուինին, նկատի ունենալով պահպանողական շրջանակներու հակազդեցութիւնը: Թուրքիոյ մէջ քարեշրջական տեսութեան թրջերէնով առաջին ակնարկողը եղած է յայտնի թուրք մտաւորական Ահմէտ Միտհաթ էֆենտին²⁴: Ան 1872-73ին *Dagarcik* պարբերաթերթին մէջ գրած յօդաւածներով Լամարքի տեսութեան մասին տեղեկութիւններ կու տայ, բայց Տարուինին չ'ակնարկեր²⁵: Շեմսէտտին Սամին (1850-1904) ալ 1879ին հրատարակած *İnsan* (Մարդ) գիրքին մէջ կ'ակնարկէ քարեշրջութեան²⁶, բայց ո'չ Լամարքի, ո'չ Տարուինի անունը կը նշէ: Իսկ Հոճա Թահսինի (1811-1881) *Tarih-i Tekvin Yahud Hilkat* (Արարչագործութիւն կամ ստեղծում) գրքոյկը, որ հրատարակուած է 1881ին եւ կ'ընդգրկէ քարեշրջական գաղափարներ, Տարուինին միայն մէկ անգամ կ'անդրադառնայ²⁷:

Ատենի օսմանեան թուրք մտաւորականներու նման, Տէմիրճիպաշեան եւս մօտէն կը հետեւի քարեշրջական դպրոցին: Արդէն 1879ին իր *Փիլիսոփայական Բառարանի* նախափորձին մէջ, ան Տարուինին կ'ակնարկէ²⁸, իսկ 1880ականներուն՝ քարեշրջական դպրոցը պաշտպանող յօդուածներ կը հրատարակէ: Ըստ իրեն, մարդը «դրական փիլիսոփայութեան մէջ՝ իբրեւ հոգի, իբրեւ երկնից որդի, իբրեւ բնութենէն արտաքոյ էակ մի չ'ուսումնասիրուիր»²⁹: Մարդը այլեւս տարբեր չէ անասուններէն եւ ան «կենդանական շղթային վերջին օղակն եւ կամ կենդանական աշխարհին կարգաւորեալ էակն է»³⁰: Տէմիրճիպաշեան կը գովէ «նոր իմաստասիրութիւնը». Տարուին ցոյց տուած է, որ մարդուն նախահայրը կապիկն է եւ նոյնիսկ այսօր գիտութիւնը ցոյց կու տայ, որ մարդուն նախահայրը կապիկէն ալ ստորին արարած մըն է³¹: Ըստ Հեքլի (Haeckel, 1834-1919) եւ քարեշրջական դպրոցի, մարդուն նախահայրը «անկեդրոն եւ անգործարան էակ մը կամ բան մ'է» եւ «Սլորոնագոյն կենդանին սերունդէ սերունդ գործարան ու գործարաններ ստանալով, նոր ձեւ գգնելով եւ ըստ ամենայնի կարարեալագործունելով» դարձած է բարձրագոյն կենդանին՝ մարդը³²:

Տէմիրճիպաշեան իր քարեշրջական գաղափարները հիմնաւորելու համար կը դիմէ նաեւ կրօնքին: Իր կարծիքով, կրօնքն իսկ կը բարեշրջի եւ մտաց զարգացման զուգահեռ անելի փիլիսոփայական կը դառնայ³³: Ան ընկերային բարեշրջութեան մասին ալ գրելով կը հաաստէ թէ դրական փիլիսոփայութեան համաձայն, ընկերային բարեշրջութիւնը անփոփոխ օրէնքներ ունի³⁴: Ըստ իրեն, ընկերութեան ուժը կ'անտեսուի քանի որ ընկերային օրէնքները չեն ճշտուիր եւ այս պատճառով մենք երեսոյթները

անհապական զորության կը վերագրենք³⁵: Հայոց մէջ դրական փիլիսոփայութիւնը տարածուած չըլլալուն համար «անկարող ենք դեռ ընդհանրապէս գրեթէ որոշել ընկերային ռեւէ վիճակի մը տարերքն, ռեւէ փոփոխութեան մը գաղտնիքն ու թաքուն պատճառքն, ռեւէ հաստատութեան ծագումն ու կենսական զորութիւնն»³⁶:

Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի աշակերտութեան համար պատրաստուած եւ 1891ին լոյս տեսած իր *Տարերք Պատմութեան Փիլիսոփայութեան* արժէքաւոր գրքոյկը կը տեղեկացնէ ընթերցողը/ուսանողը «ընկերային բարեշրջութեան օրինաց» եւ «մարդկային ազգի յառաջադիմութեան»: Գիրքը, այլ նիւթերու կողքին, բացատրութիւններ կու տայ «պատմութեան օրէնքներու» մասին³⁷:

Տէմիրճիպաշեան, թէեւ իր փիլիսոփայական բառարաններուն եւ զանազան յօդուածներուն մէջ կրօնական հաւատքը տկարացնող գաղափարներ կը յայտնէ, այդուհանդերձ ամբողջովին չ'անջատուիր հաւատքէն: Մէկ կողմէ պահպանողական միջավայրի մէջ իր ստացած դաստիարակութիւնը, միւս կողմէ դրապաշտ ու նիւթապաշտ փիլիսոփաներէ ձեռք բերած գիտելիքները զիրար կը հակասեն, ինչ որ ուրիշ պատճառներու հետ միասին հաւանաբար բացասաբար կ'ազդէ անոր հոգեւոր եւ մտաւոր խաղաղութեան: Տէմիրճիպաշեան, որ արդէն մահուան մտասեռեռում ունէր, 1908ին երկարատեւ մտային տանջանքներէ ետք ինքնասպան կ'ըլլայ:

Ան նիւթի, հիւլէի, մարմնի մասին ալ շահեկան տեղեկութիւններ կու տայ: Թէեւ հետու բովանդակալից ըլլալէ՝ եթէ նկատի ունենանք օսմանեան միտքը, ուր փիլիսոփայութիւնը դեռ նոր կը բողբոջէր, այս գրոյթները, իրենց կարգ մը թերութիւններով հանդերձ, պատմական նշանակութիւն կը զգենուն³⁸: Յատկապէս, *Գրական եւ Իմաստասիրական Ճարժումի* մէջ հրատարակուող *Հրահանգիչ Խօսակցութիւնք* յօդուածաշարքը կ'ընդգրկէ զանազան նիւթեր գիտական եւ փիլիսոփայական հարցերու շուրջ: Երկխօսութեան ձեւով գրուած այս յօդուածներուն խորագիրերն են.- «Գիտունք եւ Գրագէտք», «Միջոց, Ժամանակ, Նիւթ», «Հնութիւն Հիւլեակաւնութեան», «Հիւլէ, Տարերք», «Մարմնոց Յատկութիւնք»:

Տէմիրճիպաշեանի համաձայն նիւթը սկզբնապատճառ մըն է եւ տիեզերքը կազմուած է նիւթէն. «Այո՛, նիւթէն կազմուած է փոխզերքն: Նիւթն յափտեանական է: Ոչինչ ոչնչէ չը ստեղծուիր եւ ոչինչ չոչնչանաւք բնութեան մէջ: Կը կերպարանափոխուի միայն նիւթն՝ ա՛յն զօրութեամբ որ իրեն յապտուկ է...»³⁹: Իր նիւթապաշտութիւնը հիւլեապաշտ (atomist) բնոյթ կը կրէ: Հետեւելով յունական հիւլեական դպրոցին, կը յայտնէ, որ նիւթը անբաժան մասնիկներ ունի, ու կը հաղորդէ Դեմոկրիտէսի «աշակերտաց, աշակերտաց աշակերտներուն գրած ու քարոզած բաները»⁴⁰:

Տէմիրճիպաշեանի այն պնդումը, թէ նիւթը յափտեանական է, ցոյց կու տայ իր նիւթապաշտ վերաբերումը: Ան կը յայտնէ, որ մտածողութիւնն ալ նիւթի յատկութիւններէն մէկն է եւ առանձնապէս, կը հաստատէ որ նիւթը

բաժնեյով, անբաժանելի պարզ մասնիկներու կրնանք հասնիլ: Ան ուրիշ բան չ'ընէր եթէ ոչ՝ հիպէապաշտներու գաղափարները կրկնել:

Կ'անդրադառնայ նիւթի յարաբերութեան՝ միջոցի եւ ժամանակի հետ: Նիւթին գրաւած տեղը անոր տարածութիւնն է, եւ տարածութիւնը նիւթի «բանսն» է⁴¹: Առաւել եւս, նիւթը միշտ կը փոխուի եւ ժամանակին ենթակայ է: Ասոնք «գիպոնոց գիպոն» Դեմոկրիտէսի եւ Լուկրետիոսի տեսակէտերն են: Կը փոխանցէ Դեմոկրիտէսի բացատրութիւնները, ըստ որո՞ւ էականն տարբերութիւնը յառաջ կու գայ հիպէներու թիւի, մեծութեան, ձեւի, կարգաւորման տարբերութեամբ⁴²:

Տէմիոքիպաշեան կ'անդրադառնայ Լաւուագիէյի (Lavosier) ձեռք բերած արդիւնքներուն, թէ՛ պարզ մարմիններու թիւը 60-70ը չ'անցնիր: Շահեկան է հետեւեալ հատուածը, որ ցոյց կու տայ անոր գիտական միտքը.

Միտքն առանց փորձարկութեան կը մոլորի: Փորձարկութեան հետ կը սկսի գիտութիւնն, եւ ամէնէն ճշմարիտ իմաստասիրութիւնը այն է, որ գիտութեանց վրայ հիմնուած է: Այո, բարեկամ, նոր իմաստասիրութեան համար նիւթ կայ միայն, եւ նիւթն է մի եւ կենդանի: Բնալուծութիւնը կը վերլուծէ մարմիններն եւ ամէնութեք կը գտնէ նիւթն, ամէնութեք կը գտնէ հիպէն կամ ատոմն⁴³:

Տէմիոքիպաշեանի համաձայն գիտութենէ դուրս միայն բանդագուշանք կայ⁴⁴: Ըստ իրեն, բնական եւ բնալուծական (տարրաբանական, chemical) երեւոյթները բացատրելու համար երկու հիմնական գաղափար պէտք է ընդունիլ. Ա) նիւթը կազմուած է պարզ մարմինէ մը եւ կը բաղկանայ անբաժանելի հիպէներէ, որոնք իրարու միացած են եւ միշտ շարժման մէջ են, Բ) կշռելի նիւթին հիպէները կը գտնուին եթեր կոչուած անկշռելի միջավայրի մը մէջ եւ եթերն ու հիպէները միմեանց շարժման պատճառ կ'ըլլան⁴⁵:

Տէմիոքիպաշեան կ'անդրադառնայ նաեւ նիւթակենդանութեան (hylozoisme), որ նիւթին կենդանութիւն կը վերագրէ: Կրնանք ըսել, որ իր նիւթապաշտութիւնը հետեւողական չէր: Իր նիւթապաշտ վերաբերումը, կը յենու անելի արեւմտեան դրապաշտ եւ նիւթապաշտ փիլիսոփաներու հարեանցի ուսումնասիրութեանց վրայ, որոնց մօտէն կը հետեւէր, քան՝ քննադատական եւ հետեւողական մտածողութեան:

Տէմիոքիպաշեան մարմիններու յատկութիւններուն մասին ալ տեղեկութիւններ կու տայ, կը բացատրէ անոնց էական եւ երկրորդական յատկութիւնները: Էական յատկութիւններն են տարածութիւնը, անթափանցիկութիւնը եւ շարժունակութիւնը:

Զանգուածի եւ ծաւալի սահմանումը տալէ ետք, երեւութական եւ իրական ծաւալի մասին բացատրութիւններ կու տայ: Առաջինը, մարմնի մը տարածութեան մէջ գրաւած մասն է, իսկ երկրորդը այն է, որ մարմինը պիտի գրաւէ եթէ ծակտիքներ չըլլային: Միջմասնիկային անջրպետը անելի կրնայ ըլլալ քան մասնիկներու ծաւալները: Տէմիոքիպաշեան կ'ընդգծէ իր վստահութիւնը հանդէպ գիտութեան առարկայականութեան. «Կը տես-

ներքեւ եւ դեռ պիտի տեսնենք, թէ առերեսոյթ փիեզերքը որքան փարբեր է իրական փիեզերքէն: Գիտութիւնն իրականին ծանօթութիւնն է»⁴⁶:

Տէմիրճիպաշեանի համաձայն առանց էական յատկութիւններու կարելի չէ ըմբռնել նիւթը կամ մարմինը: Բայց առանց երկրորդական յատկութիւններու մարմինը կրնանք ըմբռնել: Երկրորդական յատկութիւններն են.- ծակոտութիւն, բաժանականութիւն, ճնշականութիւն, առաճութիւն: Ան այս բոլորը հակիրճ կերպով կը բացատրէ:

Տէմիրճիպաշեանի դրական իմաստասիրութիւնը ինքնին կը պաշտպանէ բնագանցութեան վտարումը փիլիսոփայութենէն եւ վերջինիս մատչումը գիտութեան: Դրապաշտները ընդհանրապէս գիտութեան համակիրներ եղած են: Օսմանեան Կայսրութեան պարագային ասիկա կարելորէր, քանի որ կայսրութիւնը գիտութեան մէջ շատ յետամնաց էր եւ կրօնքը կը գերակշռէր գրեթէ բոլոր մարզերու մէջ: Անոր գրութիւնները այս առումով արժէքաւոր են: Ան այն մտաւորականներէն է, որ փոքրաթիւ օսմանեան մտաւորականներու հետ աշխատանք տարած է ժողովուրդը լուստորելու:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Տէմիրճիպաշեանի ուսումնասիրութիւնները, թէւ ոչ-ուրոյն, սակայն յատուկ պատմական արժէք ունին, եթէ նկատի ունենանք իր շրջապատի մտաւորական ամլութիւնը: Ան, իր դրապաշտ աշխարհայեացքով, բարեշրջական եւ նիւթապաշտ տեսակէտերը պաշտպանած եւ արեւմտեան փիլիսոփայութիւնը ծանօթացնելու համար աշխատած: Կոստանդեանի հետ ան ջահակիրներէն է դրական փիլիսոփայութեան՝ Օսմանեան Կայսրութենէն ներս: Իբրեւ օսմանեան քաղաքացի, անոր փիլիսոփայական գործունէութիւնը ամբողջութեամբ - պատկանած ժամանակաշրջանէն մինչեւ օրս, իր ունեցած հակասութիւններով եւ դրական երեսակներով - կարիքը ունի համապարփակ վերաքննարկումի եւ վերաբժեւորումի:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Hilmi Ziya Ülken, *Türkiye’de Çağdaş Düşünce Tarihi*, Türkiye İş Bankası Kültür Yayınları, İstanbul, Յունուար 2019, էջ 147:

² 1851ին կը հիմնուի Encümen-i Danişը (սկաղեմիա) եւ 1861ին՝ Cemiyet-i İlmîye-i Osmaniyeն (Օսմանեան Գիտութեան Սիութիւն): Առաջինը կարելորէր է այն առումով, որ որպէս պաշտօնական հաստատութիւն ըմբռնած է թարգմանութեան դերը գիտական մտքի զարգացման մէջ: Իսկ երկրորդը հրատարակած է *Mecmu’-i Fünun* թերթը, որուն նպատակն էր ժողովուրդը լուստորել՝ եւրոպական գիտութիւնը եւ մշակոյթը ծանօթացնելով (Abdülbaki Güçlü, Erkan Uzun, Serkan Uzun, Ümit Hüseyin Yolsal, *Felsefe Sözlüğü*, Türkiye’de Felsefe (Türkler ve felsefe) (Փիլիսոփայական բառարան, փիլիսոփայութիւնը՝ Թուրքիոյ մէջ (թուրքեր եւ Փիլիսոփայութիւն), Bilim ve Sanat Yayınları, Ankara, 2003, էջ 1451):

³ Միւնիխ փաշա - օսմանեան քաղաքական գործիչ եւ մտաւորական: Եղած է լուստորական մը:

- ⁴ Remzi Demir, *Philosophia Ottomanica-Osmanlı Felsefesi*, Lotus Yayinlari, İstanbul, 2018, էջ 452-53:
- ⁵ Demir, էջ 426-27:
- ⁶ Ահմետ Վեֆիք փաշա - քաղաքական գործիչ եւ մտատրական:
- ⁷ Ահմետ Միտհաթ - գրագետ, լրագրող եւ հրատարակիչ:
- ⁸ Ülken, էջ 147:
- ⁹ Նոյն, էջ 152:
- ¹⁰ Ալի Սուալի - քաղաքական գործիչ եւ գրող:
- ¹¹ Ülken, էջ 32:
- ¹² Նոյն, էջ 331: Հրատարակուած է Պահա Թեմիքի կողմէ, տպուած է Արաքս տպարանին մէջ:
- ¹³ Նոյն, էջ 368:
- ¹⁴ Նոյն տեսած 1885-87ին, Պոլսոյ մէջ, Նազարէթ Տաղաարեանի խմբագրութեամբ:
- ¹⁵ Հրատարակուած է 1880-81ի միջեւ Ձմիւտնիոյ մէջ Գրիգոր Մսերեանի կողմէ:
- ¹⁶ Տ. Յարութեանեան, «Պոզիտիւիզմի Մուտըը Հայ Իրականութիւն եւ Պայքարը Նրա Գնահատման Շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1987:3(63), էջ 183-4:
- ¹⁷ *La Philosophie Positive*, 1879, Յունուար-Յունիս, էջ 313-17:
- ¹⁸ Յարութեանեան, էջ 188:
- ¹⁹ M. Orhan Okay, *Beşir Fuad- İlk Türk Pozitivist ve Naturalisti*, Dergah Yayinlari, İstanbul, 2012, էջ 241:
- ²⁰ Նոյն, էջ 169:
- ²¹ Demir, էջ 452-53:
- ²² Եղիա Տէմիրճիպաշեան, «Ազդեցութիւն Գիտութեան», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1886, էջ 29:
- ²³ Տէմիրճիպաշեան, «Գերեզմանք Ի՛նչ Կը Պատմեն Գ.», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1885, էջ 78:
- ²⁴ Տեմիր հոս կը վկայակոչէ Ատնան Ատրարը իբրեւ աղբիւր (Demir, էջ 470):
- ²⁵ Atilla Doğan, *Sosyal Darwinizm ve Osmanlı Aydınları Üzerindeki Etkileri*, ղոկտորական ատենախօսութիւն, Marmara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, İstanbul, 2003, էջ 171:
- ²⁶ Demir, էջ 487:
- ²⁷ Նոյն, էջ 471:
- ²⁸ Տէմիրճիպաշեան, *Փիլիսոփայական Բառարան*, Պոլիս, 1879, էջ 48:
- ²⁹ Տէմիրճիպաշեան, «Դրական Իմաստասիրութիւն, Դասախօսութիւն Հայկական Կրթարանին մէջ Սեպ. 1882 շար.», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1883, էջ 35:
- ³⁰ Նոյն, էջ 35:
- ³¹ Նոյն էջ 35-36
- ³² Նոյն, էջ 36:
- ³³ Տէմիրճիպաշեան, «Նոր Տարին եւ Նոր Գաղափարն», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 7:
- ³⁴ Տէմիրճիպաշեան, «Մահ Մանկավարժին Բ.», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 31:

³⁵ «Այսինչն հիմնեց Սահմանադրութիւնն, այնինչն հռչակեց այսինչ սկզբունքն, այնինչն յարոյց այնինչ խնդիրն. - այսպէս կը մտածենք եւ կ'ըսենք, ընկերութեան զօրութիւնն անտեսելով եւ ամէն բան անհատական զօրութեան միայն վերագրելով» (Եղիա Տէմիրճիպաշեան, *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 30):

³⁶ Տէմիրճիպաշեան, «Մահ Մանկավարժին Բ.», էջ 30:

³⁷ Տէմիրճիպաշեան, *Տարերք Պարմութեան Իմաստասիրութեան, Պոլիս*, Տպ. Պաղտատլեան, 1891, էջ 15-18:

³⁸ Տէմիրճիպաշեանի գրածներուն «պատմական» որակումը պէտք է հասկնալ անով, որ ինք յառաջատարներէն էր այս մարզին մէջ, անշուշտ առանց մոռնալով զմիտնիստիս Կոստանդնուքը:

³⁹ Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ (Հրահանգիչ Խօսակցութիւնք)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1886, էջ 119:

⁴⁰ Տէմիրճիպաշեան, «Հնութիւն Հիւլեականութեան (Հրահանգիչ Խօսակցութիւնք)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 32:

⁴¹ Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ ...», էջ 120-21:

⁴² Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ...», էջ 123:

⁴³ Տէմիրճիպաշեան, «Հիւլե, Տարերք», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 61:

⁴⁴ Նոյն, էջ 63:

⁴⁵ Նոյն:

⁴⁶ Տէմիրճիպաշեան, «Մարմնոց Յատկութիւնք (Հրահանգիչ Խօսակցութիւնք)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 85:

ASSESSING THE POSITIVIST PHILOSOPHY OF YEGHIA DEMIRDJIBASHIAN IN THE CONTEXT OF THE HISTORY OF OTTOMAN PHILOSOPHY (1840S ONWARDS)

(Summary)

CAN ERZURUMLUOGLU

canerzurumluoglu@hotmail.com

During the post-Tanzimat period Western philosophical trends were introduced to the Ottoman Empire. This was for political reasons. In their search for ways to salvage the failing Ottoman Empire, Turkish Ottoman intellectuals thought that the spread of political philosophy and a scientific mindset would be helpful to the empire.

As of the 1870s positivist philosophy, which was considered to promote a scientific mindset, was spread by Armenian intellectuals like Yeghia Demirdjibashian and Gosdantian in Armenian literary circles through two scientific magazines, *Medeora* (1880-81) and *Kidagan Sharjum* (1885-1887). On the other hand, Demirdjibashian promoted positivist philosophy through his magazine *Kragan yev Imasdasiragan Sharjum* (Literary and Philosophical Movement) (1883-1888), introduced the materialist and evolutionist schools of philosophy, published articles on these subjects and taught philosophy in Armenian schools.

Until 1908, he and Gosdantian were among the first champions of positivist philosophy in the Ottoman Empire, at a time when very few philosophical materials were published.